

Հայաստանի հանրապետության
Կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 41Ա
31/01/2006

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՆԻՇԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՆԵԼՈՒ» ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ուժը կորցրած՝

25.03.08թ. թիվ 93 Ա որոշմամբ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է .

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության դրամանիշերի թողարկման և շրջանառության մեջ դնելու կարգը» համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005թ. ապրիլի 26-ի ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության դրամանիշերի թողարկման կարգը» հաստատելու մասին» թիվ 201 Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

Տ. Սարգսյան

2006 թ. փետրվարի 07
Երևան

Հավելված 1

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՆԻՇԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգը կարգավորում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից Հայաստանի Հանրապետության դրամանիշերի թողարկման ընթացակարգը՝ դրամանիշերի ուրվագծի ընտրության և հաստատման, դրամանիշերի տեխնիկական պարամետրերի սահմանման, դրամանիշերի արտադրական նմուշների հաստատման և դրամանիշերի շրջանառության մեջ դնելու ընթացակարգը:

1.2 Սույն կարգի իմաստով՝

Դրամանիշ - Հայաստանի Հանրապետության արժույթը (Հայաստանի Հանրապետության դրամը)՝ թղթադրամի, մետաղադրամի և հուշադրամի տեսքով:

Թղթադրամ - դրամաշրջանառության համար թողարկված թղթե կամ պոլիմերային դրամանիշ, որը հանդես է գալիս որպես օրինական վճարամիջոց իր անվանական արժեքով:

Մետաղադրամ - դրամաշրջանառության համար թողարկված մետաղյա դրամանիշ, որը հանդես է գալիս որպես օրինական վճարամիջոց՝ իր անվանական արժեքով:

Հուշադրամ - թանկարժեք կամ այլ մետաղներից պատրաստված Հայաստանի Հանրապետության դրամ՝ մետաղադրամի տեսքով, որը հատվում է մետաղադրամների արտադրության հատուկ տեխնոլոգիայով և տարբերվում է մետաղադրամների սերիական արտադրության տեխնոլոգիաներից, մետաղադրամին տալիս է գեղարվեստական (դրամագիտական) արժեք, հանդիսանում է հավաքածուների և նվիրատվության առարկա, ունի անվանական արժեք, ինքնարժեք, վաճառքի գին, շուկայական գին և հանդես է գալիս որպես օրինական վճարամիջոց իր անվանական արժեքով:

Հատածույլ - մետաղադրամի պատրաստման համար նախատեսված մետաղյա ձուլակոճղ:

Անվանական արժեք - դրամանիշի վրա նշված թիվը և „դրամ” բառը, որը ցույց է տալիս դրամանիշի դրամային համարժեքության չափը, և որով այն դրամաշրջանառության մեջ հանդես է գալիս որպես օրինական վճարամիջոց:

Դրամանիշի թողարկում - Հայաստանի Հանրապետության դրամանիշերի արտադրության և մատակարարման պատվիրումը,

թղթադրամի տպագրությունը, մետաղադրամի և հուշադրամի հատումը, ներկրումը Հայաստանի Հանրապետություն և Կենտրոնական բանկի դրամապահոցներում պահեստավորումը:

Արտադրական նմուշ - դրամանիշի օրինակ, որը բոլոր որակական չափանիշներով և չափսերով համապատասխանում է մատակարարի հետ կնքված պայմանագրերով սահմանված չափանիշներին և որն իրենից ներկայացնում է արտադրվող դրամանիշերի օրինակելի ձևը: Դրամանիշերի զանգվածային արտադրությունը սկսելուց առաջ ներկայացվում է պատվիրատուի հաստատմանը, որից հետո հանդես է գալիս որպես էտալոն՝ պատվիրված խմբաքանակի յուրաքանչյուր դրամանիշի չափանիշների համապատասխանելիությունը ստուգելու համար:

Օրիգինալ գործիքներ - թղթադրամների տպագրման, մետաղադրամների և հուշադրամների հատման համար պատրաստված եզակի գործիքներ, որոնցից բազմացվում են դրամանիշերի արտադրության աշխատանքային գործիքները, որոնց միջոցով էլ անմիջականորեն իրականացվում է թղթադրամի տպագրությունը ու ջրանիշի պատրաստումը, կամ մետաղադրամի (հուշադրամի) հատումը:

Դրամահատարան - թղթադրամներ տպագրող կամ մետաղադրամներ (հուշադրամներ) հատող իրվաբանական անձ:

Մասնակից - Կենտրոնական բանկի կողմից հայտարարված մրցույթին մասնակցող դրամահատարան:

Մատակարար - դրամահատարան, որի հետ Կենտրոնական բանկը կնքել է դրամանիշերի տպագրության կամ հատման և մատակարարման մասին պայմանագիր:

Դրամանիշի ուրվագիծ - դրամանիշի արտաքին տեսքը (եսքիզը) տպագրված կամ նկարված թղթի վրա (ինչպես նաև համակարգչային ֆայլի տեսքով):

Դրամանիշի հիմնական բնութագրեր – դրամանիշի ձևը, չափը, թեմատիկան, նյութը, մետաղադրամի դեպքում՝ նաև համաձուլվածքը, քաշը, տրամագիծը:

Դրամանիշի տեխնիկական բնութագրեր – թղթադրամի դեպքում՝ չափը, գույնը, նյութի ֆիզիկական տվյալները (օրինակ՝ բաղադրությունը, խտությունը, գույնը, պատռման նկատմամբ դիմադրողականությունը, տարբեր նյութերի ներծծվելիության մակարդակը), պաշտպանական հատկանիշները, տպագրության եղանակները, ստանդարտները և թույլատրելի շեղումները, մետաղադրամի դեպքում՝ քաշը, տրամագիծը, համաձուլվածքը:

Դրամանիշի ուրվագծի հիմնական տարրեր - դրամանիշի ուրվագծի (եսքիզի) այն տարրերը, որոնց միասնությունը կազմում է դրամանիշի ամբողջական պատկերը (օրինակ՝ հիմնական պատկերը, չափը, ձևը, դիմանկարը, հիմնական ֆոնը, անվանական արժեքի թիվը և բառերը, սերիական համարը, Կենտրոնական բանկի նախագահի և կառավարության լիազոր մարմնի ստորագրությունները, Հայաստանի Հանրապետության զինանշանը, տեսանելի պաշտպանական հատկանիշները):

Գլուխ 2. Դրամանիշերի թողարկման գործընթացը

2.1 Դրամանիշերի թողարկման նպատակով Կենտրոնական բանկի խորհուրդը հաստատում է դրամական պահուստների (թղթադրամների և մետաղադրամների) համալրման և հուշադրամների թողարկման ծրագիրը (կամ առանձին հուշադրամ թողարկելու առաջարկը):

Հուշադրամների թողարկման ծրագիրը Կենտրոնական բանկի խորհրդի հաստատմանը ներկայացնելիս պետք է կից ներկայացվեն նաև առաջարկվող բոլոր բնութագրերի հիմնավորումների և իրացման վերաբերյալ տեղեկանք:

2.2. Դրամական պահուստների համալրման ծրագրերը սահմանում են թղթադրամների և մետաղադրամների անվանական արժեքները, որոնց պաշարները անհրաժեշտ է համալրել, համալրման ծավալները և պատվիրման ու դրամահատարանից ստացման առավելագույն ժամկետները՝ ըստ անվանական արժեքների, իսկ հուշադրամների համար՝ հուշադրամի թեմատիկան, տպաքանակը և դրամահատարանից ստացման առավելագույն ժամկետը:

2.3. Նոր անվանական արժեքով կամ նոր ուրվագծով (ամբողջովին կամ մասնակի) թղթադրամների և մետաղադրամների, ինչպես նաև հուշադրամների ուրվագծերի ընտրությունը իրականացվում է սույն կարգի, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից սահմանված մրցույթների անցկացման կարգերի պահանջներին համապատասխան: Առանձին դեպքերում, ելնելով ուրվագծերի կամ հուշադրամների թեմատիկայի առանձնահատկություններից (նույն սերիայի շարունակություն, առկա ուրվագծի վրա նախատեսվող փոփոխություններ և այլն)՝ դրամանիշի ուրվագիծը կարող է պատրաստվել կոնկրետ դիզայներին տրված պատվերի հիման վրա:

2.4. Դրամանիշի ընտրված ուրվագիծը ներկայացվում է Կենտրոնական բանկի խորհրդի հաստատմանը: Եթե ուրվագծի հաստատումից հետո դրամանիշերի արտադրության տեխնոլոգիական առանձնահատկությունները պահանջում են դրամանիշի ուրվագծի կամ պաշտպանական հատկանիշների նշանակալի փոփոխություններ՝ ապա դրամանիշի արտադրության տեխնոլոգիական պահանջներին բավարարող նոր ուրվագիծը կրկին ներկայացվում է Կենտրոնական բանկի խորհրդի հաստատմանը:

Նշանակալից տարբերություն է համարվում դրամանիշի ուրվագծի հիմնական տարրերի, հիմնական գույների, պաշտպանական հատկանիշների և գրառումների փոփոխությունը՝ նորերի ներդրում, արդեն հաստատվածների հեռացում, չափսերի, ձևերի կամ տեղի փոփոխություն և այլն:

Նշանակալից չի համարվում ուրվագծի հիմնական տարրերի բաղկացուցիչ մասերի՝ պատկերների առանձին մասնիկների, ֆոնի գիլյոշի և այլնի փոփոխությունը:

2.5. Դրամանիշերի թողարկման գործընթացի համար պատասխանատու ստորաբաժանումը (այսուհետ՝ «պատասխանատու ստորաբաժանում») Կենտրոնական բանկի խորհրդի հաստատմանն է ներկայացնում դրամանիշի հիմնական բնութագրերը և պաշտպանական հատկանիշները: Կից պետք է ներկայացվեն նաև դրանց հիմնավորումները: Հիմնական բնութագրերը և պաշտպանական հատկանիշները նախապես պետք է համաձայնեցվեն Կենտրոնական բանկի կանխիկ դրամով գործառնությունների համար պատասխանատու ստորաբաժանման հետ:

Կենտրոնական բանկի խորհրդի կողմից դրամանիշերի հիմնական բնութագրերի և պաշտպանական հատկանիշների հաստատումից հետո միայն կարող է կատարվել դրամանիշերի թողարկման պատվերը:

Դրամանիշերի արտադրության մրցույթի անցկացման, պայմանագրի կնքման և գործողության ընթացքում Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված հիմնական բնութագրերի և պաշտպանական հատկանիշների փոփոխությունները պետք է ներկայացվեն Կենտրոնական բանկի խորհրդի հաստատմանը:

2.6. Դրամանիշերի արտադրության և մատակարարման պատվերի տեղաբաշխումն իրականացվում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված փակ մրցութների անցկացման կարգի պահանջներին համապատասխան: Առանձին դեպքերում՝ արտակարգ իրավիճակներում, ելնելով պատվերի հրատապությունից, տեխնիկական բնութագրերի առանձնահատկություններից, դրամանիշերի արտադրությունը և մատակարարումը կարող է կատարվել կոնկրետ դրամահատարանին (պայմանները որոշվում են ուղղակի բանակցությունների միջոցով) տրված պատվերի հիման վրա:

2.7. Դրամանիշերի արտադրության և մատակարարման պատվերը մրցութային կարգով տեղաբաշխելու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը մրցութային հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում մրցութային պայմանները, որոնք ներառում են դրամանիշերի տեխնիկական չափանիշները՝ հիմնված սույն կարգի 2.5-րդ կետում նշված Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված հիմնական բնութագրերի, պաշտպանական հատկանիշների և հաստատված ուրվագծի վրա:

Մրցութային պայմաններում պետք է ներառվի նաև պայման այն մասին, թե հունքի (թղթադրամների թղթի, մետաղադրամների հատածույլերի) ձեռք բերման պարտականությունը կողմերից ով է կրելու (Կենտրոնական բանկը թե մատակարարը):

Մրցութային պայմանների հետ մեկտեղ մասնակցին պետք է տրամադրվեն նաև սույն կարգի 3-րդ, 4-րդ և 5-րդ գլուխները:

2.8. Մրցույթի ավարտից հետո պատասխանատու ստորաբաժանումը մրցույթի արդյունքների և մրցութային հանձնաժողովի որոշման, իսկ դրամանիշերի պատվիրումը ուղղակի բանակցությունների միջոցով իրականացնելու դեպքում՝ բանակցությունների արդյունքների մասին տեղեկանքը ներկայացնում է Կենտրոնական բանկի խորհրդին:

2.9. Դրամանիշերի արտադրության և մատակարարման մասին պայմանագրի կնքումից հետո մատակարար ընկերությունների հետ

պայմանագրի կատարման ընթացքում առաջացած տեխնիկական հարցերի համաձայնեցման (պայմանագրի շրջանակներում), այդ թվում՝ դրամանիշերի առանձին վերցված տարրերի օրինակի հաստատման (օրինակ՝ թղթադրամների ջրանիշի, պաշտպանական ներգծի օրինակ, „Թաքնված պատկեր” պաշտպանական հատկանիշի կառուցվածքը, միկրոտառաչարը, փայլաթիթեղների օրինակները, մետաղադրամների գիպսե մոդելները և այլն) իրավասությունը տրվում է պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին:

2.10. Մատակարար ընկերության կողմից պատրաստված դրամանիշի «արտադրական նմուշը» ներկայացվում է Կենտրոնական բանկի նախագահի հաստատմանը, որից հետո այն ծառայում է որպես էտալոն դրամանիշի ողջ խմբաքանակի որակապես գնահատման համար: Առանձին դեպքերում դրամանիշի «արտադրական նմուշը» հաստատելու համար Կենտրոնական բանկի նախագահին իր կարգադրությամբ կարող է լիազորել պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին: Մատակարար ընկերության կողմից ներկայացված «արտադրական նմուշի» և Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված դրամանիշի ուրվագծի, հիմնական բնութագրերի և պաշտպանական հատկանիշների միջև նշանակալից տարբերության առկայության դեպքում դրամանիշի «արտադրական նմուշը» ներկայացվում է Կենտրոնական բանկի խորհրդի հաստատմանը:

2.11. Դրամանիշերի խմբաքանակի արտադրությունը կարող է սկսվել միայն դրամանիշի «արտադրական նմուշի» հաստատումից հետո:

Դրամանիշի արտադրության ընթացքում առանձին տեխնոլոգիական փուլերից հետո, այդ փուլերի հաստատումների (միջանկյալ) անհրաժեշտության դեպքում, Կենտրոնական բանկի նախագահը լիազորում է պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին, կամ վերջինիս առաջարկությամբ՝ Կենտրոնական բանկի այլ մասնագետի:

Այս միջանկյալ հաստատումն իրականացնող անձի կամ անձանց կողմից պետք է կազմվի, ստորագրվի և Կենտրոնական բանկի նախագահին ներկայացվի համապատասխան տեղեկանք՝ ներկայացված միջանկյալ տարբերակի ստուգման արդյունքների և տեղ գտած շեղումների (թույլատրելի կամ ոչ թույլատրելի) վերաբերյալ, ինչպես նաև հնարավոր այլ տեղեկատվություն:

Գլուխ 3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության դրամանիշերի թողարկման նպատակով հայտարարված մրցույթներին ներկայացվող հայտերով (այսուհետ՝ Հայտ) ներկայացվող փաստաթղթերը և հայտերի գնահատումը

3.1. Հայտերում պարտադիր պետք է ներառվեն.

- դրամանիշերի արտադրության, փաթեթավորման, ապահովագրման և մինչև Երևան տեղափոխման գինը: Թղթադրամների դեպքում նշված գները պետք է ներառեն նաև նմուշների գինը.
- Գների հնարավոր փոփոխման քաղաքականությունը, դեպքերը և հաճախականությունը.
- դրամանիշերի արտադրության և մատակարարման աշխատանքների

Ժամանակացույցն ըստ փուլերի և մատակարարման եղանակը.

- մրցույթի Մասնակցի կողմից առաջարկվող վճարման պայմանները.
- թղթադրամների դեպքում՝ թղթի մատակարարի անունը.
- մրցույթի Մասնակցի կողմից առաջարկվող փաթեթավորման կարգը և նկարագրությունը.
- Մասնակցի պետական գրանցման վկայականի պատճենի օրինակը.
- տեղեկանք Մասնակցի կողմից նախկինում պատշաճ իրականացված նմանատիպ աշխատանքների մասին (դրա առկայության դեպքում): Նշված տեղեկանքին անհրաժեշտ է կցել պայմանագրի մյուս կողմի գրավոր հավաստումը աշխատանքի պատշաճ կատարման մասին (դրա առկայության դեպքում).
- տվյալ տեսակի գործունեության իրականացման լիցենզիայի պատճենի օրինակը (եթե գործունեությունը տվյալ երկրում լիցենզավորման ենթակա է), ընդ որում, Մասնակցի կողմից ներկայացվող լիցենզիայի գործողության ժամկետը չի կարող պակաս լինել սույն հրավերով նախատեսված՝ ձեռքբերվող աշխատանքների կատարման վերջնաժամկետից.
- Այ-Էս-Օ-9001 կամ Այ-Էս-Օ-9002 միջազգային ստանդարտի սերտիֆիկատի պատճեն.
- Մասնակցի տարեկան ֆինանսական հաշվետվությունը՝ հաստատված աուդիտորական կազմակերպության կողմից.
- մրցույթի հայտի ապահովում.
- տեղեկանքներ այն մասին, որ անվճարունակ ճանաչված չէ, լուծարման գործընթացում չի գտնվում, մրցույթի հայտը ներկայացվելու օրվան նախորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր՝ հարկային և այլ պարտադիր վճարների գծով.

Նշված փաստաթղթերից որևէ մեկի բացակայության դեպքում Հայտը մերժվում է:

3.2. Մասնակիցը, բացի վերը նշված փաստաթղթերից, կարող է ներկայացնել նաև այլ փաստաթղթեր, որոնք նրա կարծիքով կարող են հաշվի առնվել մրցույթի հաղթողին որոշելիս:

3.3. Հայտերի գնահատման չափանիշներին տրվում են հետևյալ կշիռները՝

1. գինը	-
0	0,5
2. մատակարարման եղանակը և ժամկետը	-
0	0,1
3. վճարունակությունը	-
0	0,1
4. Կենտրոնական բանկի համար նախկինում կատարված	

նմանատիպ պատվերների կատարման փորձը	-
5	0,1
5. այլ կազմակերպությունների համար կատարված նմանատիպ պատվերների կատարման փորձը	-
5	0,0
6. Մասնակցի կողմից առաջարկված լրացուցիչ ծառայությունները	-
5	0,0
7. Մասնակցի կողմից առաջարկված վճարման պայմանները	-
5	0,0

Հանձնաժողովը գնահատում է յուրաքանչյուր մասնակցի յուրաքանչյուր չափանիշը 1-ից 5 բալանոց սանդղակով: Ընդ որում՝ 1-ը ամենացածր բալն է, 5-ը՝ ամենաբարձր: Այն չափանիշը, որը բացակայում է, գնահատվում է 0 բալ:

Յուրաքանչյուր չափանիշին տրված բալը բազմապատկվում է իր կշռով և ստացվում է տվյալ «չափանիշի գնահատականը»: Նույն մասնակցի «չափանիշների գնահատականները» գումարվում են իրար և ստացվում է տվյալ մասնակցի «ամփոփ գնահատականը»:

3.3.1. Գինը գնահատվում է՝

- 1. եթե այն գերազանցում է ամենացածր գինն ավելի քան 30%-ով.
- 2. եթե այն գերազանցում է ամենացածր գինը 21-30%-ի սահմաններում.
- 3. եթե այն գերազանցում է ամենացածր գինը 11-20%-ի սահմաններում.
- 4. եթե այն գերազանցում է ամենացածր գինը մինչև 10%-ի սահմաններում.
- 5. եթե այն ամենացածրն է ներկայացվածների մեջ:

3.3.2. Մատակարարման եղանակը և ժամկետը գնահատվում են՝

- 1. եթե ժամկետը գերազանցում է սահմանվածն ավելի քան 3 ամսով.
- 2. եթե ժամկետը գերազանցում է սահմանվածը մինչև 3 ամսով և մատակարարումն իրականացվելու է ծովային և/կամ ցամաքային եղանակով.
- 3. եթե ժամկետը գերազանցում է սահմանվածը մինչև 1 ամսով և մատակարարումն իրականացվելու է ծովային և/կամ ցամաքային եղանակով, կամ եթե ժամկետը գերազանցում է սահմանվածը մինչև 3 ամսով և մատակարարումն իրականացվելու է օդային եղանակով.
- 4. եթե ժամկետը համապատասխանում է սահմանվածին և մատակարարումն իրականացվելու է ծովային և/կամ ցամաքային եղանակով.

- 5. եթե ժամկետը համապատասխանում է սահմանվածին կամ պակաս է սահմանված ժամկետից և մատակարարումն իրականացվելու է օդային եղանակով:
- 3.3.3.** Սասնակցի վճարունակությունը գնահատվում է Կենտրոնական բանկի հաշվապահական հաշվառման համար պատասխանատու ստորաբաժանման կողմից կատարված տվյալ կազմակերպության ֆինանսական հաշվետվության վերլուծության հիման վրա:
- 3.3.4.** Կենտրոնական բանկի համար նախկինում կատարված նմանատիպ աշխատանքների փորձը գնահատվում է`
- 1. եթե կատարված աշխատանքներն ունեցել են զգալի թերություններ, մատակարարումն իրականացվել է ժամկետից ուշ, և/կամ աշխատանքների կատարման ընթացքում առաջացել են վեճեր.
 - 2. եթե կատարված աշխատանքներն ունեցել են զգալի թերություններ.
 - 3. եթե կատարված աշխատանքներն ունեցել են աննշան թերություններ և մատակարարումն իրականացվել է ժամկետից ուշ կամ աշխատանքների կատարման ընթացքում առաջացել են վեճեր; եթե դրամահատարանը նախկինում Կենտրոնական բանկի համար նմանատիպ աշխատանքներ չի իրականացրել
 - 4. եթե կատարված աշխատանքներն ունեցել են աննշան թերություններ.
 - 5. եթե կատարված աշխատանքները եղել են անթերի:
- 3.3.5.** Այլ կազմակերպությունների համար նմանատիպ պատվերների կատարման փորձը գնահատվում է`
- 1. եթե կատարել է նմանատիպ 1 պատվեր.
 - 2. եթե կատարել է նմանատիպ 2 - 4 պատվեր.
 - 3. եթե կատարել է նմանատիպ 5 - 7 պատվեր.
 - 4. եթե կատարել է նմանատիպ 8 - 10 պատվեր.
 - 5. եթե կատարել է նմանատիպ 10-ից ավել պատվեր:
- 3.3.6.** Լրացուցիչ ծառայությունները գնահատվում են`
- 1. եթե դրանք հետաքրքրություն չեն ներկայացնում Կենտրոնական բանկի համար.
 - 2. եթե դրանք բավականին կարևորություն չեն ներկայացնում Կենտրոնական բանկի համար.
 - 3. եթե դրանք կարող են օգտակար լինել Կենտրոնական բանկի համար, սակայն պահանջում են լրացուցիչ ծախսեր.
 - 4. եթե դրանք օգտակար են և անվճար Կենտրոնական բանկի համար.
 - 5. եթե դրանք կարևոր են և անվճար Կենտրոնական բանկի համար:
- 3.3.7.** Վճարման պայմանները գնահատվում են`

- 1. եթե դրանք պահանջում են թողարկման գնի 20 %-ից ավել կանխավճար և ակրեդիտիվ.
 - 2. եթե դրանք պահանջում են թողարկման գնի մինչև 20% կանխավճար և ակրեդիտիվ, կամ թողարկման գնի 20 %-ից ավել կանխավճար, իսկ գումարի մնացած մասի վճարումը՝ դրամանիշերի ստացումից հետո.
 - 3. եթե դրանք պահանջում են թողարկման գնի մինչև 20% կանխավճար, իսկ գումարի մնացած մասի վճարումը՝ դրամանիշերի ստացումից հետո.
 - 4. եթե դրանք պահանջում են ողջ գումարի համար ակրեդիտիվ.
 - 5. եթե դրանք պահանջում են ողջ գումարի վճարումը դրամանիշերի ստացումից հետո:
- 3.4. Հանձնաժողովի կողմից սահմանված այլ հատկանիշները, որոնք չեն ներառվում 3.3. ենթակետում (չեն համապատասխանում վերոնշյալ նկարագրություններին) գնահատվում են հանձնաժողովի կողմից անհատապես:
- 3.5. Հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի «ամփոփ գնահատականը» ամենաբարձրն է:
- 3.6. Եթե մասնակիցների «ամփոփ գնահատականները» համընկնում են, ապա հաղթող է ճանաչվում այն մասնակիցը որի՝
1. գինն ավելի բարձ է գնահատված.
 2. եթե գնի գնահատականները նույնն են, ապա այն մասնակիցը, որի մատակարարման ժամկետն ու եղանակը ավելի բարձ է գնահատված.
 3. եթե մատակարարման ժամկետների գնահատականները նույնն են, ապա այն մասնակիցը, որի վճարունակության գնահատականն ավելի բարձր է.
 4. եթե վճարունակության գնահատականները նույնն են, ապա այն մասնակիցը, որի Կենտրոնական բանկի համար կատարված նմանատիպ պատվերների կատարման փորձի գնահատականն ավելի բարձր է.
 5. եթե Կենտրոնական բանկի համար կատարված նմանատիպ պատվերների կատարման փորձի գնահատականները նույնն են, ապա այն մասնակիցը, որի այլ կազմակերպությունների համար կատարված նմանատիպ պատվերների կատարման փորձի գնահատականն ավելի բարձր է.
 6. եթե այլ կազմակերպությունների համար կատարված նմանատիպ պատվերների կատարման փորձի գնահատականները նույնն են,

ապա այն մասնակիցը, որի լրացուցիչ ծառայությունների գնահատականն ավելի բարձր է.

7. Եթե լրացուցիչ ծառայությունների գնահատականները նույնն են, ապա այն մասնակիցը, որի առաջարկված վճարման պայմանների գնահատականն ավելի բարձր է:

Գլուխ 4. Դրամանիշերի թողարկման վերաբերյալ պայմանագրերում ներառվող պարտադիր դրույթները

4.1 Դրամանիշերի թողարկման վերաբերյալ պայմանագրերում պարտադիր պետք է ներառվեն հետևյալ դրույթները՝

ա) թղթադրամների տպագրության դեպքում, թղթադրամների հիմնական խմբաքանակից բացի պետք է տպագրվեն նաև նմուշներ (նմուշների քանակը սահմանվում է պայմանագրով)՝ հայերեն և անգլերեն լեզուներով «ՆՍՈՒՇ» մակագրությամբ.

բ) թղթադրամների տպագրման, մետաղադրամների և հուշադրամների ուրվագծերի և դրանց հատման համար պատրաստված «օրիգինալ գործիքների» տիրապետման, տնօրինման և օգտագործման բացառիկ իրավունքը պատկանում է Կենտրոնական բանկին: Դրամանիշերի թողարկման «օրիգինալ գործիքների» փոխանցումը դրամահատարանից մեկ այլ արտադրողի կամ Կենտրոնական բանկին իրականացվում է միայն Կենտրոնական բանկի պահանջով և թույլտվությամբ.

գ) դրամանիշերի տպագրման ընթացքում առաջացած ավելցուկ և խոտան դրամանիշերի, ինչպես նաև տպագրական նյութերի այլ թափոնների ոչնչացման պայմանները.

դ) դրամանիշերի խմբաքանակների ընդունման, դրանց որակական և քանակական ստուգման պահանջները և պայմանները.

ե) թերի դրամանիշերի փոխհատուցման պայմանները՝ ըստ սույն կարգի 5-րդ գլխի.

զ) մի քանի դրամանիշերի տպագրման/հատման դեպքում՝ յուրաքանչյուր դրամանիշի հետ կապված գինը.

է) դրամանիշերի նոր խմբաքանակի ընդունման և դրամապահոցներում պահպանման համար ժամանակավոր խոչընդոտների առկայության դեպքում դրամանիշերի պատրաստի խմբաքանակը դրամահատարանում ժամանակավորապես ի պահ թողնելու պայմանները.

ը) դրամանիշերի հիմնական և տեխնիկական բնութագրերը.

թ) կանխավճարի առկայության դեպքում մասնակիցը պետք է ներկայացնի կանխավճարի գումարի չափով բանկային երաշխիք.

ժ) ով պետք է վճարի ակրեդիտիվի բացման և սպասարկման վճարը:

Գլուխ 5. Դրամանիշերի ընդունումը և ստուգումը

5.1. Դրամանիշերի խմբաքանակի (ամբողջական կամ մասնակի) ստացումից հետո պատասխանատու ստորաբաժանումն իրականացնում է որակական և քանակական ստուգում համաձայն պայմանագրով սահմանված ընթացակարգերի:

5.2. Թղթադրամները և մետաղադրամներն ընդունվում են գործարանային փաթեթավորման արկղերով: Գործարանային փաթեթավորման վնասված լինելու դեպքում դրա միջի դրամանիշերն ամբողջությամբ հաշվվում են, այդ մասին կազմվում է ակտ, որը ստորագրում են արժեքներն ընդունող և հանձնող (եթե ներկա են) կողմերի ներկայացուցիչները: Թղթադրամները և մետաղադրամները արկղերից բջիջների մեջ տեղափոխելիս հաշվվում են կապոցներով կամ պարկերով, իսկ խմբաքանակի 1%-ը՝ ընտրանքային կարգով, ենթարկվում է քանակական և արտաքին տեսքի որակական ստուգման՝ ստուգելով և բացահայտելով դրամանիշերի մոտ «արտադրական նմուշից» նշանակալից տարբերությունների առկայությունը: Ստուգման ընթացքում հայտնաբերված թերի դրամանիշերի թիվը տարածվում է ողջ խմբաքանակի վրա (բազմապատկվում է 100-ով) և ստացվում է ողջ խմբաքանակում թերի թղթադրամների կամ մետաղադրամների քանակը:

5.3. Թղթադրամների և մետաղադրամների արտաքին տեսքի որակական ստուգման ընթացքում հայտնաբերված թերությունները դասակարգվում են երեք մակարդակի և այդ մակարդակների համար սահմանվում են հետևյալ առավելագույն ընդունելի սահմանաչափերը՝

- I - ծայրահեղ թերություն, որը նկատվում է բնակչության կողմից, որի հետևանքով թղթադրամների կամ մետաղադրամների շրջանառության ֆունկցիան կամ նույնականությունը չի ապահովվում - **0.01 %**.
- II - զգալի թերություն, որը չի նկատվում բնակչության կողմից, սակայն խոչընդոտում է տեսակավորող մեքենաների կողմից դրամանիշերի ճանաչմանը - **1.0 %**.
- III - աննշան թերություն, որը չի նկատվում բնակչության կողմից և չի խոչընդոտում տեսակավորող մեքենաների կողմից դրամանիշերի ճանաչմանը - **2.5 %**:

Թղթադրամների և մետաղադրամների թերությունների մակարդակների սահմանումներն ավելի մանրամասն որոշվում են Կենտրոնական բանկի և դրամահատարանի փոխադարձ համաձայնությամբ և ամրագրվում են պայմանագրում:

Եթե թերի թղթադրամների կամ մետաղադրամների քանակը գերազանցում է վերոնշյալ սահմանաչափերը, ապա ողջ խմբաքանակը կարող է համարվել թերի, և Կենտրոնական բանկն իրավունք ունի պահանջել նոր խմբաքանակի թողարկում:

Եթե թերի թղթադրամների կամ մետաղադրամների քանակը չի գերազանցում վերոնշյալ սահմանաչափերը, ապա դրանց տեսակարար կշիռը տարածվում է ողջ խմբաքանակի վրա և ստացվում է ողջ խմբաքանակում թերի թղթադրամների կամ մետաղադրամների քանակը: Այս քանակը ենթակա է Դրամահատարանի կողմից վերականգնման (առանց լրացուցիչ վճարումների) կամ ֆինանսապես փոխհատուցման՝ ըստ Կենտրոնական բանկի ցանկության:

5.4. Սույն կարգի 5.2 և 5.3 կետերում նշված ստուգման դրական արդյունքից հետո կատարվում է պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերի և դրանց թույլատրելի շեղումների ստուգում:

Տվյալ ստուգման ընթացքում ստուգման ենթակա տեխնիկական բնութագրերի ցանկը, որոնք պետք է նվազագույնս ստուգվեն, սահմանվում է պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից՝ ելնելով Կենտրոնական բանկի տեխնիկական հազեցվածությունից:

Այն տեխնիկական բնութագրերի համար, որոնք չեն ստուգվում Կենտրոնական բանկում, Դրամահատարանը պետք է տրամադրի պայմանագրով սահմանված չափանիշների ստուգման արդյունքների վերաբերյալ տեղեկանք, և դրանք կարող են ստուգվել երրորդ կազմակերպության միջոցով:

5.5. Թղթադրամների և մետաղադրամների տեխնիկական բնութագրերի ստուգման համար ընտրվում է սույն կարգի 5.2 կետում նշված ստուգման համար ընտրված խմբաքանակի 1%-ը: Պայմանագրում նշված ստանդարտների թույլատրելի շեղումներից առավել շեղումներ հայտնաբերելու դեպքում գնահատվում է թերի թղթադրամների և մետաղադրամների հնարավոր քանակը ողջ խմբաքանակում հաշվի առնելով արտադրության տեխնոլոգիաները.

ա) եթե այդ քանակը գերազանցում է խմբաքանակի 2.5%-ը, ապա ողջ խմբաքանակը համարվում է թերի (սակայն մնում է Կենտրոնական բանկի տիրապետման տակ), և Կենտրոնական բանկն իրավունք ունի պահանջել նոր խմբաքանակի թողարկում՝ առանց լրացուցիչ վճարումների.

բ) եթե այդ քանակը չի գերազանցում խմբաքանակի 2.5%-ը, ապա տվյալ քանակությամբ թղթադրամները և մետաղադրամները ենթակա են Դրամահատարանի կողմից վերականգնման (առանց լրացուցիչ վճարումների) կամ ֆինանսապես փոխհատուցման՝ ըստ Կենտրոնական բանկի ցանկության:

Ստուգման ավարտից հետո կազմվում է ակտ, որում նշվում է ստուգված դրամանիշերի քանակը, ստուգված տեխնիկական և պաշտպանական հատկանիշների ցանկը և վիճակը, պայմանագրով սահմանվածից առավել շեղումների դեպքում՝ դրանց նկարագրությունը և գնահատականները:

5.6 Հուշադրամներն ընդունվում են հատերով, խմբաքանակի 100%-ը ենթարկվում է ստուգման, ինչպես քանակական (հատերով վերահաշվման), այնպես էլ որակական (արտաքին տեսքը)՝ ստուգելով և բացահայտելով դրամանիշերի մոտ «արտադրական մնուշից» նշանակալից տարբերությունների առկայությունը:

Հուշադրամների տեխնիկական բնութագրերի ստուգման համար յուրաքանչյուր հուշադրամի խմբաքանակից ընտրվում է մեկ հուշադրամ: Հարգի տարբերություն, պայմանագրում նշվածի համեմատ, հայտնաբերելու դեպքում այդ հուշադրամը ներկայացվում է փոձաքննության համապատասխան լիազոր մարմնին, որից ստացվում է հուշադրամի հարգի մասին պաշտոնական փաստաթուղթ:

Թերությունների առկայության դեպքում ողջ խմբաքանակի 10%-ը ևս, ընտրանքային կարգով, ենթարկվում է տեխնիկական բնութագրերի ստուգման՝

ա) եթե ընտրված հուշադրամների մեջ ևս հայտնաբերվում են թերություններ, ապա ողջ խմբաքանակը վերադարձվում է Դրամահատարանին և վերջինս պարտավոր է նորից պատրաստել և տրամադրել Կենտրոնական բանկին ողջ խմբաքանակը՝ առանց լրացուցիչ վճարումների:

բ) եթե ընտրված հուշադրամների մեջ չեն հայտնաբերվում թերություններ, ապա ստուգման ենթարկված հուշադրամները վերադարձվում են Դրամահատարանին և վերջինս պարտավոր է նորից պատրաստել և տրամադրել Կենտրոնական բանկին այդ քանակությամբ հուշադրամներ՝ առանց լրացուցիչ վճարումների:

Գլուխ 6. Շրջանառության մեջ դրամանիշերի դնելը

6.1. Եթե նոր ստացված դրամանիշերը ամբողջովին կրկնում են նախկինում թողարկված համապատասխան անվանական արժեքի դրամանիշը (այդ թվում այն թղթադրամները, որոնց մոտ փոփոխվել է միայն թողարկման սերիան), ապա դրանք դրվում են շրջանառության մեջ առանց լրացուցիչ որոշում ընդունելու:

6.2. Եթե թողարկվել է նոր անվանական արժեքի դրամանիշ, նոր հուշադրամ, նոր նմուշի, սակայն շրջանառության մեջ առկա անվանական արժեքի դրամանիշ կամ արտաքնապես նախորդին նման, սակայն թողարկման նոր տարեթիվ կրող դրամանիշ, ապա պատասխանատու ստորաբաժանումը Կենտրոնական բանկի խորհրդին ներկայացնում է առաջարկություն այն շրջանառության մեջ դնելու ամսաթվի վերաբերյալ և շրջանառության մեջ առկա նախորդ թողարկումների դրամանիշերի շրջանառության պայմանների փոփոխման կամ անփոփոխ թողնելու վերաբերյալ: Առաջարկությունը ներկայացվում է Կենտրոնական բանկի խորհրդին դրամանիշերը շրջանառության մեջ դնելու նախատեսվող ժամկետից առնվազն երկու ամիս առաջ: Կենտրոնական բանկի խորհրդի կողմից որոշում ընդունելուց հետո Կենտրոնական բանկը զանգվածային լրատվական միջոցներով հանդես է գալիս համապատասխան հայտարարությամբ:

6.3. Կենտրոնական բանկը տպագրում է նոր անվանական արժեքի կամ նոր նմուշի թղթադրամների և մետաղադրամների պատկերներով և պաշտպանական հատկանիշների նկարագրությամբ բուկլետներ և դրամանիշերը շրջանառության մեջ դնելուց առնվազն մեկ շաբաթ առաջ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերին է տրամադրում այդ բուկլետները, իսկ հասարակությանը տեղեկացնելու համար միջոցառումներ է ձեռնարկում հասարակական վայրերում նույնատիպ պաստառներ փակցնելու ուղղությամբ:

6.4. Նոր հուշադրամները շրջանառության մեջ դնելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ընդունելուց հետո պատասխանատու ստորաբաժանման ներկայացնամբ Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ սահմանվում է հուշադրամի Կենտրոնական բանկի կողմից վաճառքի գին:

6.5. Հուշադրամները շրջանառության մեջ են դրվում Կենտրոնական բանկի կողմից սահմանված վաճառքի գնով, առանձին դեպքերում՝ Կենտրոնական բանկի նախագահի համաձայնությամբ՝ ինքնարժեքով, կամ Կենտրոնական բանկի կողմից ներակայացուցչական նպատակներով նվիրատվության միջոցով:

6.6. Շրջանառության մեջ առկա վճարունակ հուշադրամները Կենտրոնական բանկին հետ հանձնելու դեպքում դրանք ընդունվում և փոխհատուցվում են միայն հուշադրամի անվանական արժեքով: